Խմբագրական

Գործել արագ եւ ազդու

Թւում է՝ անելանելի վիճակ է արդէն:

Միամսեայ հերոսական մարտումներից յետոյ ընկած Գետաշէնին ու Մարտունաշէնին. յաջորդում են միւսները՝ Շահումեանի, Հադրութի, Մարտունու, Ասկերանի գիւղերը, սեղմւում է օղակն ամբողջ Արցախի եւ նրա միջնաբերդ Ստեփանակերտի շուրջը: Մեր դիմաց ազգերի ելուզակները չեն միայն, այլեւ խորհրդային զազմական, քաղաքական, բարոյական ամբողջ մեքենան, որի դիմաց չենք կարողանում մեր արժանապատուութիւնն անգամ պաշտպանել:

Կրեմլը մեզ հետ կատուի իր խաղն է խաղում դարձեալ: Միայն թէ այս անգամ կատուն հիւանդ է, գուցէեւ մահամերձ, հետեւաբար՝ շատ աւելի վտանգաւոր:

Թւում է՝ անել է նաեւ հայոց խորհրդարանում եւ... նրա շուրջը: Ոմանք շարունակում են իրար մեղադրել, ուրիշներն արդէն յոյսեր են փայփայում խափանարար իրենց աշխատանքի պտուղները քաղելու, ոմանք կապիտուլացիա են յանձնարարում, ուրիշներ՝ ընդհանուր զօրահաւաք (երեւի հետաղեղով կռուելու համար), իսկ ոմանք էլ... երկուսը միասին:

Մանր է կացութիւնը մեր հորատեղծ հանրապետութեան ղեկավարութեան համար: Ոմանք զգում են, որ կատարուած սխալ հաշուարկների հատուցման ժամն է հասել, ուրիշներ պատրաստւում են Գորբաչովի առաջ մեղայի գալու, մինչ ուրիշներ մտածում են արդէն նաւից դուրս փախչելու մասին: Միայն քչեր, շատ քչեր, պատրաստ են իրենց պատասխանատուութիւնը ստանձնելու մինչեւ վերջ:

Ստեղծուել է մի կացութիւն՝ որտեղ հնարաւոր զիջումներն անգամ անիմաստ են թւում այլեւս, քանի որ դրանք առայժմ չունեն գնորդ եւ գուցէ չունենան վերջ...

Սակայն քաղաքական մտքի համար անելանելի վիճակներ չկան, պայմանաւ որ այն գործի արագ, շրջահայեաց եւ ազդու: Մանաւանդ՝ չմնայ մենակ եւ առանց համաժողովրդական նեցուկի:

Եւ այդ ելքը մենք տեսնում ենք մի ազդեցիկ երաշխաւոր-միջնորդի որոնման մէջ, որ պատրաստ լինի մեզ եւ Կրեմլին առաջնորդելու բանակցութեան սեղան, վարկաւորելու եւ երաշխաւորելու մեր հնարաւոր զիջումները:

Դա կարող է լինել Ռուսաստանը: □